

ՄԵՊԱԳԻՐ ՄԻ ՔԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԱՀԱՆ ԳԱՅՄԵՐՅԱՆ

Վանի թագավորության արձանագրությունների զգալի մասը մինչ օրս լիարժեք թարգմանված չէ: Հիմնականում վատ են թարգմանված այն արձանագրությունները, որոնք կազմված են առանց գաղափարագրերի և դուրս են կաղապարային կառուցվածքից: Նման արձանագրություններն ունեն ինչպես կրոնաձիսական, այնպես էլ տնտեսական, վարչական, ռազմական և այլ բովանդակություն:

Նմանօրինակ առաջին արձանագրությունը, որի մասին կիսուենք, հայտնաբերվել է 1898 թ. Վանա լճից արևելք՝ Ռուսա I (մ. թ. ա. 745–713 թթ.) արքայի կողմից կառուցված արհեստական լճակի՝ «Ռուսայի ծովի»¹ (ներկայիս Քեշիշ գոյ) արևելյան կողմում գտնվող Կայսարան գյուղից: Այն եռատող է՝ փորագրված գյուղի մուտքի մոտ գտնվող ժայռի վրա: Արձանագրության մեջ ասվում է.

1. D 𐎧al-di-ni-i URU-i-e pu-lu-si
2. al-zi-ni-e-i pu-lu-si na-a-ma-ri
3. a-O-di D 𐎧al-di-ni-e-i URU-e-i²

Արձանագրության թարգմանությունն է.

«Խալդի աստծո քաղաքի արձանագրությունը (կոթողը), alziniei արձանագրությունն *namari audi* Խալդի աստծո քաղաքի»³:

Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը թարգմանված է խիստ թերի, և հիմնական իմաստը գրեթե անհասկանալի է մնում: Եթե հանենք տեքստում առկա ինը բառերից չորսը («քաղաք» իմաստով երկու գաղափարագիր և Խալդի աստծո անվան երկու հիշատակություն), ապա մնացյալ հինգ բառերից միայն *pusi* «կոթող, արձանագրություն» բառն է թարգմանված, իսկ մյուսներն անհասկանալի են: Որևէ առարկություն չունենալով առաջին տողի ընթերցման և թարգմանության վերաբերյալ, երկրորդ տողի անհասկանալի

¹ Г. А. М е л и к а ш в и л и. Урартские клинообразные надписи (*այսուհետև*՝ УКН). М., 1960, ¹ 268, *пбХ 4*; Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей (*այսուհետև*՝ КУКН). Ереван, 2001, ¹ 482.

² УКН, ¹ 301; КУКН, ¹ 482.

³ Նույն տեղում: Այստեղ և մնացյալ բոլոր դեպքերում մասնագետների կողմից սեպագիր տեքստերի տուսերեն և այլ լեզուներով կատարված թարգմանությունները հայերեն են վերածվել մեր կողմից:

մնալու պատճառը, անկասկած, վերջին երկու բառերի ոչ ճիշտ բառաբաժանումն է:

Մեր կարծիքով՝ այս տողի երկրորդ բառը (ինչպես տեսնում ենք, այն ընթերցվում և թարգմանվում է ուղղական առաջին հոլովով՝ *pususi* «արձանագրություն») պետք է ընթերցել *pu-lu-si-na-a* ձևով (եզակի ներգոյական հոլով), որը կթարգմանվի «արձանագրությունում», «արձանագրության մեջ»: Այսինքն, հաջորդ՝ կարծեցյալ *na-a-ma-ri* ընթերցված և առանց թարգմանության թողած բառը իրականում պետք է լինի *ma-ri* և, հետևաբար, երկրորդ տողի ճիշտ բառաբաժանումը կլինի:

2. *al-zi-ni-e-i pu-lu-si-na-a ma-ri*⁴

Նախադասության առաջին՝ *alziniei* բառը, թեև թողնված է առանց թարգմանության, սակայն ծանոթագրության մեջ Գ. Մելիքիշվիլին նշում է, որ այն դրված է սեռական հոլովով, ուղիղ ձևը կլինի *alzini*, որը և հարցականով թարգմանվում է «ժայռափոր»⁵, հավանաբար, հաշվի առնելով նաև արձանագրության ժայռափոր լինելու հանգամանքը:

Նման կարծիքը հիմնավորվում է նաև հայերենում «արձան» բառի գոյութայնը, որն ունի «խոշոր քար», «ժայռաբեկոր», «կոթող», «արձանագրություն» իմաստները⁶:

Սեպագիր *alzini*⁷ (անշուշտ, *alzen* հնչմամբ, քանի որ սեպագրում *zi=ze*, իսկ վերջին կիսաձայն *i/e-ն* չի հնչել) >հայ. արձան գուգահեռը հիմնավորվում է *l* (*l*)>ր և բառամիջի *e>ա* հնչյունափոխությամբ (*z -ն*, անկասկած, սեպագրում արտահայտել է նաև «ձ» հնչյունը):

Եվ *l>ր* և *e>ա* անցումները բնորոշ են սեպագրից հայերենին անցած ձևերում, ինչպես *op. սեպ. ulise>հայ. ուրիշ*, սեպ. *šule>հայ. չոր*, *šule>ծորալ*⁸, նաև հատուկ անուններում՝ *op. URU Algania>Արգանի*⁹, *Alzini > Արձնիք*, *Աղձնիք* (հունարենում *Արգանենե*), *KUR Kulha>Ճորոխ*¹⁰: Բառամիջյան *-e-ն* տալիս է *-ա-*, և այդ երևույթը նկատելի է ինչպես հատուկ անուններում, այնպես էլ հասարակ գոյականներում, թվականներում, ածականներում (*op. KUR Siremu >*

⁴ Նման բառաբաժանում առաջարկվել է Ֆ. Քրոնիգի կողմից, ով, սակայն, համարում էր, որ պակասում են արձանագրության սկզբն ու վերջը (ինչը, իհարկե, ճիշտ չէ), հետևաբար, նաև երկրորդ տողը թողել է առանց կապակցված թարգմանության (տե՛ս F. W. K ö n i g. Handbuch der chaldischen Inschriften (այսուհետև՝ HCHI), Graz, I, 1955, II, 1957, 79 (tafel 50).

⁵ YKH, № 301, ծան. 1:

⁶ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան, (այսուհետև՝ ՀԱԲ), Երևան, I, 1971, էջ 325:

⁷ Այս բառը սեպագիր տեքստերում վկայված է միայն Ռուսա II-ի (մ. թ. ա. 685–645 թթ.) արձանագրություններում (տե՛ս YKH, № 279, տող 3, 4, № 448, տող 9 և № 452, տող 10):

⁸ Նույնացումները մերն են:

⁹ Հ. Գ ա ր ա գ յ ո գ յ ա ն. Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում (այսուհետև՝ ՀԼՍԱ), I, Երևան, 1998, էջ 87:

¹⁰ Նույն տեղում, էջ 10, ծան. 10, էջ 237:

Սուրամ¹¹, KUR Urtehe > Արցախ¹², հ.-ե. *dekm>հայ. տասն¹³, սեպ. şerabi > հայ. ծարավ¹⁴ և այլն):

Սյապխով, կարող ենք ասել, որ *alzi/en(i)* > արձան անցումը միանգամայն հնարավոր է, և քանի որ այդ բառը արձանագրության մեջ սեռական հոլովով է դրված, կթարգմանվի «ժայռի», «ժայռի-վրայի» ձևով:

Տողի վերջին՝ *mari* բառն էլ, որը սխալ ընթերցման հետևանքով դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից, մեր կարծիքով, հ.-ե. *mar//*mor «ծով-լիճ» հայ. մալր «ճահիճ»¹⁵ արմատի սեպագիր վկայված ձևն է: Նման՝ հ.-ե. *mar > սեպ. *mar(i)* նույնացման օգտին որպես լրացուցիչ փաստարկ կարող է հանդիսանալ ինչպես բառի նման թարգմանության տեքստին համապատասխան լինելու հանգամանքը, այնպես էլ Խալդի աստծո քաղաքի լճափին (Ռուսայի ծով) գտնվելու փաստը:

Սյապխով՝ առաջին և երկրորդ տողերը միասին կթարգմանվեն.

1. Խալդի աստծո քաղաքինն – է (այս) արձանագրությունը
2. Ժայռի-վրայի (ժայռափոր): Արձանագրությունում՝ ծով(ափնյա)...

Երրորդ տողի առաջին՝ *audi* բառը, որը թարգմանված չէ, ևս մեկ անգամ հանդիպում է «Ռուսայի ծովի» կառուցման արձանագրության մեջ¹⁶, որը գտնվել է լճափնյա Տոնի գյուղից: Մեր կարծիքով՝ *audi*-ն բարդ բառ է՝ կազմված *av* (=aw) և *di* արմատներից: Առաջին *aw* (հալ հնչմամբ) արմատը կարելի է նույնացնել հ.-ե. *awo>հայ. հալ «մեծ հայր», «պապ», «նախնիք» (հմմտ. լատ. *avus*, գոթ. *awo*, հին իռլ. *ave*, հաբ. (բողոքն էլ նույն իմաստով)¹⁷ բառարմատի հետ: Երկրորդ՝ *di/e* բաղադրիչը կարող է լինել հայ. դի-ք. «դից», «աստված» բառի հիմքը, որը ծագում է հ.-ե. *dhēs, *dhəs «կուռք», «լույս», «պայծառություն» արմատից¹⁸: Այսինքն՝ կարելի է ասել, որ *av-di* > *haw-dhi* (հ աճականով) բառը

¹¹ Վ. Ա. Գ ա յ ս ե բ յ ա ն. Սեպագիր աղբյուրների KUR Etiu երկրի տպոնիմիկայի հարցեր.– ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, - 3, էջ 82:

¹² О. О. Карагезян. Локализация урартского царского города Арцашкы (այսուհետև՝ ЛУЦГА).– Вестник общественных наук АН АрмССР, 1976, 1 5, с. 69–73.

¹³ ՀԱԲ, հ. IV, Երևան, 1979, էջ 378:

¹⁴ Նույնացումը մերն է:

¹⁵ Т. В. Гамкрелидзе, В. С. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ИЯиИ). Тбилиси, 1984, с. 672–673.

Սեպագիր աղբյուրներում *mari* բառը մեկ անգամ հանդիպում է նաև Արգիշտի I-ի (մ. թ. ա. 786–764 թթ.) Խորխոռյան տարեգրության երրորդ տարվա դեպքերի նկարագրության մեջ՝ Ուրմիա լճի հարավային ափամերձ երկրները գրավելու կապակցությամբ: Գ. Մելիքիշվիլին այստեղ ուղղական երկրորդ հոլովով տրված *marini* բառը թեականորեն թարգմանում է «ամրություն» (տե՛ս УКН, -127, I, տող 26), ինչը, իհարկե, ընդունելի համարել չի կարելի:

¹⁶ УКН, -268, տող 24: Այս արձանագրությունը որն է կապակցված թարգմանություն չունի, իսկ մեզ հետաքրքրող հատվածը, ուր վկայված է *audi* բառը, ընդհանրապես թողնված է առանց թարգմանության:

¹⁷ ՀԱԲ, հ. III, Երևան, 1977, էջ 66–67, ИЯиИ, с. 766–767.

¹⁸ ՀԱԲ, հ. I, էջ 672, ИЯиИ, с. 777 և այլուր, Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ), Երևան, 1987, էջ 443:

նշանակում է «մեծ-հայր աստված»¹⁹, «մեծն աստված» կամ ուղղակի «մեծն»՝ որպես պատվանուն:

Այսպիսով, ողջ արձանագրությունը առաջարկում ենք թարգմանել հետևյալ կերպ.

1. Խալդի աստծո քաղաքինն է (այս) արձանագրությունը
2. Ժայռափոր: Արձանագրությունում, ծով/ափնյա/
3. Մեծն Խալդիի քաղաքի (մասին է գրված):

Ի՞նչ է պարզվում արձանագրության մեր թարգմանությունից.

ա) արձանագրության գտնված վայրում, այն է՝ Ռուսայի ծովի մոտ, կառուցվել է նաև մի քաղաք, որը կրել է Խալդի աստծո անունը²⁰: Սեպագիր տեքստերում առաջին և միակ անգամն է, որ Խալդի աստվածը վկայված է «Մեծն» տիտղոսով, որը, կարծում ենք, կարող է կարևոր լինել, Վանի թագավորության պետական կրոնի ուսումնասիրման համար:

բ) թեև հայտնի չէ արձանագրության հեղինակի անունը, սակայն մի հետաքրքիր դիտարկում կարելի է անել այդ առթիվ: Այսպես, արձանագրության մեջ առկա *alzin(i)*-արձան բառը սեպագիր տեքստերում հանդիպում է ևս չորս անգամ և բոլորն էլ միայն Ռուսա Բ Արգիշտոտրո (մ. թ. ա. 685–645 թթ.) արձանագրություններում²¹: Արդյոք այս փաստը չի՞ հուշում, որ ժայռափոր խնդրո առարկա արձանագրությունը ևս պատկանել է Ռուսա Բ-ին:

Տեքստերում հաճախ հանդիպող անեծքի մի բանաձևի թարգմանության մասին

Շատ արձանագրություններում հանդիպող անեծքի կադապարային (տրաֆարետային) բանաձևին, այն է՝ «... ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի ... ով ուրիշին ստիպի անել այդ բաները ..., թող ոչնչացնեն նրան Խալ-

¹⁹ Սեպագիր տեքստերում վկայված մի շարք հատուկ անուններ նույնպես կազմված են *di* > *ḫi*-*p*, *ḫi*-*g* հիմքով, ինչպես օր. *D Hal-di* (վկայված է նաև *Al-di* ձևով), *D Sar-di*, *D Melar-di* [նման ընթերցում նախկինում ընդունված *D Selardi*-ի փոխարեն առաջարկում է Ս. Հմայակյանը (տե՛ս Ս. Հ մ ա յ կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 48–50), *D Sinu-iar-di*, *D Aršibe-di/ni*/ և այլն (ՄԿԽ, -27 և այլուր): Գ. Ջահուկյանի կարծիքով *Hal-di* դիցանունը բնիկ հայկական Հաղ-դի ձևն է, որը նշանակել է «ժամանակի աստված» (տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին.– ՊԲՀ, 2000, -3, էջ 124–129, ծան. 8), իսկ *D Aršibe-di-ni* դիցանվան մասին գրում է, որ այն *h*-*e*. ծագում ունի, և *di* բաղադրիչն էլ *h*այ. *ḫi*-*p* բառի հիմքն է համարում, որն էլ, ինչպես հեղինակն է նշում, քրիստոնեության մուտքից հետո ստանում է միայն հեթանոսական աստծո իմաստ, ի հակադրություն աստուած բառի (տե՛ս ՀԼՊ, էջ 443): Ըստ ամենայնի՝ «*di*» հիմքով են կազմված նաև *Diu-šin/i*, *I ʿe-di-ipti* անձնանունները (ՄԿԽ, -155–267), *Ar-di-/ni*/ քաղաքանունը (ՄԿԽ, -19 և այլուր) և այլն:

²⁰ Գ. Մելիքիշվիլու եթադրությունը, ըստ որի՝ արձանագրության մերձակայքում գտնվել է Խալդի աստծո քաղաքներից՝ մեկը, իսկ արձանագրությունն էլ ուղղակի ցուցանակի դեր է կատարել այդ քաղաքի համար (տե՛ս ՄԿԽ, -301, ծան. 2), լիովին հաստատվում է մեր թարգմանության արդյունքում: Ցավոք, այդ քաղաքի մասին գրավոր այլ տեղեկություններ մեզ չեն հասել:

²¹ ՄԿԽ, -279, -448, -452.

դին, Թելշերան, Շիվինեն ...»²², հաճախ հաջորդում է անեծքը եզրափակող մի հատված, որն առ այսօր թարգմանված չէ: Այդ հատվածն է.

...me-i ar-**hi** ú-ru-li-a-ni
me-i i-na-i-ni me-i na-a-ra-a
a-ú-i-e ú-lu-ú-li-e²³

Գ. Մելիքիշվիլին այս հատվածի մասին գրում է. Չնայած այն բանին, որ բաների իմաստը մեծամասամբ կարծես թե հայտնի է (*mei-ժխտական մասնիկ, nara «ժողովուրդ» (?)*, *avie, aviei «որևէ-տեղ», «ինչ-որ-տեղ», սևե - հավանաբար սև-ից՝ «տանել», «քշել»* և այլն), բայց և այնպես տալ կապակցված թարգմանություն այս հատվածի համար, մեզ թվում է անհնար: Ասվածին համաձայն է նաև Ն. Հարությունյանը²⁴:

Այժմ փորձենք հասկանալ հատվածի իմաստը:

Այսպես. առաջին *me-i(=mi)* բառը, ինչպես վերն ասվեց, Գ. Մելիքիշվիլին համարում է ժխտական մասնիկ «թող չ...» իմաստով կամ էլ «բայց» շաղկապ²⁵: Չվիճարկելով *mi-ի* ժխտական իմաստը և նման թարգմանությունը՝ հարկ է նշել, որ Գ. Ջահուկյանի կարծիքով այդ բառը լիովին համապատասխանում է հայերենի մի ժխտականին²⁶, իսկ Ա. Ալայանը գտնում է, որ որոշ արձանագրություններում *me-i(=mi)*-ն ոչ թե «մի» ժխտականն է, այլ «մի» թվականը²⁷: Երկրորդ՝ *ar-hi* բառը, որը չի թարգմանվում²⁸, հնարավոր ենք համարում նույնացնել հայերենի աղի «ցեղ, տոհմ, ժողովուրդ, զարմ»²⁹ բառի հետ: Սեպագիր վկայված *arhi-* (վերջին կիսաձայն *-i-ի* անկմամբ) *arhi* > հայ. աղի անցումը հիմնավորվում է բառամիջի *-r->-լ/ղ-* հնչյունափոխությամբ, որը նկատելի է նաև այլ օրինակներում, ինչպես սեպ. *arše* > աղջ-իկ³⁰, *harari* > խաղաղ³¹, *hari* > խաղ «ճանապարհ»³² և այլն: Այս *r > l* հնչյունափոխությունը նաև

²² УКН, № 19, № 20 և այլուր:

²³ УКН № 29, տող 21–23; УКН № 30, տող 22–24 և այլուր, КУКН, № 45, տող 21–23 և այլուր:

²⁴ УКН № 29, ծան. 10, КУКН, № 45, ծան. 23:

²⁵ УКН, с. 402.

²⁶ Այս մասին տե՛ս նաև Գ. Б. Д ж а у к я н. Урартский и индоевропейские языки. Ереван, 1963, с. 124:

²⁷ А. А м а л я н. Об армянском числительном «один» в эпиграфике Ванского царства. – ИФЖ, 2013, № 3, с. 223–227.

²⁸ Ֆ. Քյոնիգը *arhi* բառը համարում է «կյանք» բառի հոմանիշ (տե՛ս НСНІ, II, р. 174):

²⁹ ՀԱԲ, հ. I, էջ 131: Բ. Դյակոնովը հայ. աղի բառին վերագրում է խուրիական ծագում (**alla/e/hhi «տիրային»* - *allae* □տիրուհի□ = ուրարտ. «տէր»). տե՛ս (И. М. Дьяконов. Древние языки Малой Азии. М., 1980, с. 359), սակայն Գ. Ջահուկյանը նման համեմատությունը իմաստային առումով համոզիչ չի համարում (տե՛ս ՀԼՊ, էջ 425):

³⁰ Նույնացումը մերն է: Մասնագիտական գրականության մեջ *arše* բառը թարգմանվում է «երեխա», «պատանի» (И. И. Мещанинов. Аннотированный словарь урартского /биайского языка (այսուհետև՝ АСУЯ). Л., 1978, с. 52; УКН, с. 390):

Ֆ. Քյոնիգը, ինչպես և Բ. Դյակոնովը *ar-še* բառի առաջին *ar* սեպախումբը հարցականով ընթերցում են *ub* և *ub-še*՝ կարծեցյալ բառը թարգմանելով «կարգ, ձև, եղանակ» (НСНІ, II, р. 206) կամ էլ «պատանեկություն, պատանի» (И. М. Дьяконов. Урартские письма и документы (այսուհետև՝ УПД). М.–Л., 1963, с. 91):

³¹ Նույնացումը Գ. Ջահուկյանին է, ով նաև մատնանշում է ուրարտական բարբառներում գոյություն ունեցած *r/l* հերթագայության մասին (ՀԼՊ, էջ 432):

ընդհանուր *h.-ե. բնույթ է կրում*³²: Այսինքն *arhi>*աղի «ցեղ, տոհմ» անցումը կարելի է ընդունելի ու ճիշտ համարել և հատվածի առաջին երկու բառերը թարգմանել այսպես՝ «թող ցեղը (տոհմը) *uruliani*»:

Առաջին տողի *ú-ru-li-a-ni* բառի թարգմանության հարցում մասնագետները տարակարծիք են: Այսպես, *Բ. Մեշյանին* վր թեև չի թարգմանում այն, սակայն գտնում է, որ այդ բառը գոյական է և *arhi* բառի հետ ներառվում է աստծու անեծքը իրենց վրա կրող հարազատների ցուցակում³⁴, իսկ *Ֆ. Քյոնիգը* թարգմանում է «անեծք»³⁵: Որոշ մասնագետներ էլ թարգմանում են այդ անկասկած բարդ բառի առաջին *uruli* բաղադրիչը, որը վկայված է նաև սեպագիր այլ տեքստերում³⁶: *Բ. Դյակոնովը*, *ար-արմատին* վերագրելով խուռական «պատրաստվել», «շինվել» իմաստը, *ur-ul* ձևը հարցականով թարգմանում է «մշակել», «հերկել», «վարել»³⁷: *Գ. Ղափանցյանը* *uruli* բառի արմատը համարում է *uru-*ն (*li -ն` հոգնակիության ցուցիչ*), այն նույնացնելով հայերենում պահպանված ուրու \square հոգի \square ³⁸ բառի հետ, որը թեև *Գ. Ջահուկյանը* կասկածելի է համարում³⁹, սակայն քանի որ իմաստային առումով էլ ուրու-/ներ/ = հոգիներ/ թարգմանությունը լիովին համապատասխանում է քննարկվող հատվածի բովանդակությանը, մեր կարծիքով՝ այն միանգամայն ճիշտ և ընդունելի կարելի է համարել:

Քննարկվող *uruliani* բառի մյուս արմատը *iani-*ն է, որը արձանագրություններից մեկում վկայված է ոչ թե *i-a-ni*, այլ *ia/ja-ju/ կցագրով` ja-ni* ձևով⁴⁰, և այն *i /j>* հ սովորական հնչյունափոխությամբ կտա հան (*կիսաձայն i-ի անկմամբ*), որը հայերեն բայարմատ է «հանել, հափշտակել, բաժին հանել, տարածել»⁴¹ իմաստով: Այսինքն՝ *uruliani* նշանակել է «հոգիները-հանել, հոգեհան, սպանել, մեռցնել»:

Այսպիսով, մեզ հետաքրքրող հատվածի առաջին տողը կթարգմանվի. 1. թող աղիք հոգեհան (*լինի*) (=թող աղիսի հոգիները հանեն) \square :

Հաջորդ տողն է. *mei inaini mei nara*

³² Թեև այս բառը մասնագետներն իրավացիորեն թարգմանում են «տղի, ճանապարհ, արշավանք» (ACYA, c. 125; YKH, c. 396), սակայն զիտակցաբար (?), կամ չիմանալու արդյունքում չեն նշում հայերենում առկա խաղ «ճանապարհ» բառի գոյության մասին:

³³ ИЯиИ, c. 196.

³⁴ АСУЯ, c. 336.

³⁵ HChI, II, p. 208.

³⁶ YKH, № 28, տող 9, 45, - 167, տող 8:

³⁷ УПД, c. 92. Կարծում ենք, որ *Բ. Դյակոնովի* առաջարկված *ur-«վարել»* թարգմանության հիմքում ընկած է իր իսկ կողմից բացահայտած բառասկզբի *u>ya /վա/* հնարավոր անցումը, որի դեպքում *ur>var* զուգահեռը ճշգրտորեն արտացոլում է *h.-ե. նախալեզվի *vedh* («վարել, բշել, տանել, առաջնորդել») արմատից ծագած և միայն հայերենին բնորոշ վար «հերկել, մշակել, վարել, բշել» ձևը: Հ.-ե. մյուս բոլոր լեզուներում այդ արմատը պահպանվել է առանց մայր լեզվի բառավորի -dh բաղաձայնի հնչյունափոխության, ինչպես օրինակ հին իռլ. *fed-im* «վարել, առաջնորդել», կիմր. *ar-weddu* «վարել, բերել», հին պրուս. *weddē*, *h. uլ. veda*, *vesti* «տանել, առաջնորդել», ռուս. *водить, воевода* և այլն (տե՛ս *ՀԱԲ, հ. IV, էջ 313*):

³⁸ ՀՂ, Դ, էջ 429:

³⁹ Գ. Ղափանցյանի *Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961, էջ 138*:

⁴⁰ YKH, -128, A4, տող 6, *ja = ja/ju/ կցագրի մասին տե՛ս* *УПД, c. 89, 98*.

⁴¹ ՀԱԲ, հ. III, էջ 33:

Առաջին՝ *mei* (=mՎ-i) բառի մասին վերևում արդեն խոսվեց, իսկ հաջորդ՝ *i-na-i-ni* բառը, որը մասնագետները թարգմանում են «աստվածություն, աստվածային»⁴² կամ «կյանք, կենաց»⁴³, մեր կարծիքով՝ կազմված է *ina* «այս, այստեղ, սրանում»⁴⁴, «հենց այս»⁴⁵ ցուցական դերանունից, որը հայերենի մի շարք բարբառներում նույնությամբ պահպանվել է և նշանակում է «այն», «հենց այն», «այդ», «հենց այդ»⁴⁶ և *ini* (ինի) վերջավորությունից, որն այստեղ, հավանաբար, նշանակում է «լինի»⁴⁷, այսինքն կարելի է թարգմանել «թող դա-լինի», կամ «թող այդ(պես)-լինի»⁴⁸:

Հետաքրքիր է, որ այդ անեծքը՝ «հոգեհան, աստված հոգիդ առնի, հոգիդ դժոխքի բաժին դառնա և այլն» ձևերով պահպանվել ու հասել է մինչև մեր օրերը:

Երկրորդ տողն ավարտվում է *mei nara* բառերով, ուր *mei* - «թող», «մի» ժխտական մասնիկին հաջորդող *na-a-ra-a* բառը Գ. Մելիքիշվիլին թարգմանում է «ժողովուրդ»⁴⁹, իսկ Բ. Դյակոնովը՝ «մարդիկ», «ժողովուրդ», «բնակչություն»⁵⁰: Թեև նրանք չեն նշում, սակայն նման թարգմանության համար կարող էր հիմք հանդիսանալ ընդհանուր *h.-ե. *nēr-* «տղամարդ» (հմմտ. հուն-՝ *άνήρ* «ամուսին», հայ. աներ «կնոջ հայրը», *h. հնդկ. nram*, պրս. *nar* «այր, տղամարդ» և այլն)⁵¹ բառը և քանի որ այն տեքստում վկայված է *h.-ե. հոգնակիակերտ *a/ա/ ցուցիչով*⁵², հետևաբար, նշանակում է «տղամարդիկ», «մարդիկ», այսինքն՝ «մարդկանց բազմություն, խումբ», որը կարող էր հասկացվել նաև «ցեղ», «ցեղախումբ», «ժողովուրդ»:

Այսպիսով երկրորդ տողը կթարգմանվի.

2. թող այդ(պես)-լինի: Թող ցեղը ...

Եվ վերջապես այս հատվածի վերջին տողն է *a-ú-i-e ú -lu- ú -li-e*: Առաջին՝ *aúe* բառը մասնագետները տարբեր կերպ են թարգմանում: Այսպես. եթե Բ. Մեշյանինովն այն թարգմանում է «խավար», «զիշեր», «դժոխք, տարտարոս»⁵³,

⁴² УПД, с. 88.

⁴³ НСНІ, II, р. 187.

⁴⁴ УКН, с. 397.

⁴⁵ АСУЯ, с. 141.

⁴⁶ ինչ ցուցական դերանունը պահպանվել է Հավշենի, Նոր-Նախիջևանի, Մուշի և այլ բարբառներում՝ «այն, հենց-այն, այդ, հենց-այդ» իմաստներով (տե՛ս ՀԱԲ, հ. I, էջ 170):

⁴⁷ Նման թարգմանության համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ հայերեն բարբառներում (Չանգեզուրի, Արցախի, Արեշ-Հավարիքի և այլն) «լինել» բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքը ունենում է «ինի» (=լինի) ձևը: Թեև մեր կողմից քննվող արձանագրության մեջ վկայված չէ ին-ի բայի վերջին -ի խոնարհիչը, որպես առանձին վանկ, սակայն այլ արձանագրություններում այն վկայված է *i-na-a-i-ni-i* ձևով (УКН, № 37, տող 19):

⁴⁸ Բառացի պետք է հասկանալ «... այն ինչ ասվեց, թող հենց այդպես էլ թող լինի»:

⁴⁹ УКН, с. 402.

⁵⁰ УКН, с. 90.

⁵¹ ՀԱԲ, հ. I, էջ 192-193; ИЯИИ, с. 190.

⁵² ИЯИИ, с. 283. Հ.-ե. հոգնակիակերտ **a/ա/ ցուցիչը* սեպագիր տեքստերում հանդիպում է նաև հատուկ անուններում, օր. *Qatarza*>Կղարջ-ք, *Huzana*>Խորձեն-ք, *Şu-a*>Մով-ք (տե՛ս ՀԼՍՍ, էջ 42): Մլավոնական լեզուներում, նաև ռուսերենում հոգնակիության /ա/ ցուցիչը պահպանվել է մինչ օրս, ինչպես օր. *дома*-/տներ/, *леса*- (անտառներ), *глаза*-(այքեր) (տե՛ս նաև ՀԼՍՍ, էջ 183):

⁵³ АСУЯ, с. 71.

իսկ Գ. Մելիքիշվիլին և Բ. Դյակոնովը «ինչ-որ տեղ», «որևէ-տեղ»⁵⁴, այսպես Զ. Գարագոյանը ավելի սուս նախադասությունը թարգմանում է «մահվան ուղարկեն»⁵⁵: Վերջին թարգմանությունը թեև հրաշալի կերպով համընկնում է տեքստի բովանդակությանը, սակայն միայն այդքանը բավարար չէ թարգմանության հավաստիության համար, իսկ այլ ապացույցներ էլ հեղինակը չի բերում:

Ընդունելի⁵⁶ է արդյոք առաջարկված այս տարակարծիք թարգմանություններից որևէ մեկը: Մեր կարծիքով, քանի որ *ú-lu-ú-li-e* բառը գրեթե նույնությամբ պահպանվել է հայերենում *հ.-ե. *ol «ող»* արմատի կրկնությամբ կազմված «ողող» ձևով, որը նշանակում է «ողբ, լաց, կոծ»⁵⁶, այսպես երկրորդ տողի վերջին երկու բառերի հետ երրորդ տողը կթարգմանվի՝ «... թող ցեղը (տոհմը) *awie* ողողա («ողբա, լացի, կոծի»)»:

Նախադասության բովանդակությունը հուշում է, որ *awie* (ազ հիմքով) բառը, հավանաբար, նշանակել է «հավետ, հավերժ»:

Նման կարծիքը հիմնավորվում է նաև սեպ. *aw(aw)>haw(h)aw* «սկիզբ, ծայր, վերջ, մինչև վերջ» նույնիմաստ բառարմատի գոյությամբ, որը, ինչպես հայտնի է, ծագել է *հ.-ե. *raw «ծայր, վերջ»* ձևից⁵⁷: Փաստորեն, արձանագրության մեջ վկայված է (եթե ընդունենք, որ սեպագիրը չէր կարող արտահայտել առաջին *հ* հնչյունը) *հ.-ե. մայր լեզվից *p>h* հնչյունափոխությամբ հայերենին անցած */h-/aw* ձևը: Եվ եթե ընդունելի համարենք նման թարգմանությունը, այս կարող ենք նաև ասել, որ Մհերի դրան նշանավոր արձանագրության մեջ հիշատակված *D A-u-i-e* աստվածուհին հին հայկական Վանի թագավորության պանթեոնում համարվում էր հավերժության աստվածուհին:

Այսպիսով, անեծքի այս բանաձևի մինչև օրս չհասկացված հատվածը կթարգմանվի հետևյալ կերպ.

... թող աղյի (ընտանքի) հոգիները դուրս-գան (մեռնեն)
թող այդ(պես)-լինի: Թող ցեղը (տոհմը)
հավետ ողողա (ողբա, լացի):

Ահա թե ինչպիսին է եղել ուրարտական շրջանի ամբողջական անեծքը.

Ով ... ջարդի, ով գողանա, քշի-տանի ... կամ ուրիշին ստիպի այդ անել, թող ոչնչացնեն նրան Խաղդի, Թելշեբա և Շիվինի աստվածները երկրի երեսից, (բառացի՝ արևի տակ) թող աղյի ոչնչանա (բառացի՝ հոգիները դուրս գա), թող հենց այդպես լինի, թող ցեղը (տոհմը) հավետ ողողա (ողբա, լացի):

Վկայություն խաղողորհների մասին

⁵⁴ УКН, -29, ծան. 10: УПД, с. 87 (այստեղ *awie=awje*). Բ. Դյակոնովը այն համարում է խուրիերենի դերանվանական *aw* արմատից ծագած:

⁵⁵ ՀԼՍՍ, էջ 333-334:

⁵⁶ ՀԱԲ, հ. III, էջ 555: Հետաքրքիր է, որ Գարինի ու Երզնկայի բարբառներում ողող բառը ունի ճիշտ սեպագրում վկայված ուլուլ-ալ «կանանց լալը, ողբալը, կանչելը» ձևը: Հ.-ե. մի շարք լեզուներում ևս այս բառը պահպանվել է նույն իմաստով, օր. հուն. γλολος «ճիչ, կնոջ լաց», լատին՝ *ululatio* «ոռնալ, ողբալ, կոծել», սանսկր. *ulul* «տուր ճիչ» (տե՛ս նույն տեղում):

⁵⁷ ՀԱԲ, հ. III, էջ 67, ՀԼՊ, էջ 51 և այլուր:

Վանա լճից հյուսիս-արևելք գտնվող Գյուզակ գյուղից հայտնաբերված Մենուա արքային պատկանող երկու արձանագրություններում⁵⁸ խոսվում է նոր քաղաքի հիմնադրման մասին: Նախ կառուցվում են հզոր (բառացի՝ հոյակապ) ամրոց, պալատ և պաշտամունքային կառույցներ, ապա հիմնվում են նաև խաղողի և պտղատու այգիներ⁵⁹: Նորակառույց քաղաքը Մենուան անվանում է Խալդի աստծո անվամբ⁶⁰, իսկ նորատունկ այգիները՝ իր անվամբ⁶¹: Առաջին արձանագրության վերջին հատվածը (տող 23–36) մինչ օրս վերջնական թարգմանություն չունի: Բերենք ողջ հատվածը Գ. Մելիքիշվիլու ընթերցմամբ և թարգմանությամբ.

- | | |
|--|--------------------------------|
| 23. Me-nu-a-še a-li-e | Մենուան ասում է. |
| 24. a-še ^{GIS} ul-di t[e]-šú-li-e | Երբ խաղողի այգին tešule |
| 25. GUD III UDU ^D 𒀭al-di-e | ցուլ և 3 ոչխար Խալդի աստծուն |
| 26. ur-pu-ú-li-i-ni | թող զոհաբերվի (և) |
| 27. ha-lu-li nš-ḫu-li-ni | ծիսակատարություններ (?) թող |
| | կատարվեն (?) |
| 28. e-’a ^D 𒀭al-di-na-a-K[ը] | ինչպես Խալդիի դարպասների, |
| 29. e-’a pu-lu-si-na-ka-i | այնպես էլ արձանագրության |
| | առջև: |
| 30. [a]-še GEŠTIN MEŠ š ú-ú-ḫi-e | երբ խաղողի այգու կառուցումը(?) |
| 31. [’]a(?)-ḫu-li-e qar-me-ḫi | ‘ahule-տոն |
| 32. ^D 𒀭al-di-e nš-ḫu-li-ni | Խալդի աստծուն թող |
| | կատարվի(?) |
| 33. ^D 𒀭al-di-i-na-a Kը | Խալդիի դարպասների մոտ, |
| 34. [q]ar-me-ḫi ^D ‘A-ru-ba-ni | տոն(?) - Արուբանի |
| | աստվածուհուն, |
| 35. [qa]r-me-ḫi ^D 𒀭al-di-i-e | տոն(?) - Խալդի աստծուն |
| 36. (p)u-ú-lu-si-ni-ka-i | արձանագրության առջև: |

Հատվածի թարգմանությունից պարզ երևում է, որ հիմնական հանգուցային բառերը կամ ընդհանրապես թարգմանված չեն, կամ էլ թարգմանված են հարցականով, ինչը վկայում է, որ Գ. Մելիքիշվիլին վստահ չէ թարգմանության ճշտության մեջ:

Ներկայացնենք վերոհիշյալ հատվածի մեր թարգմանությունը:

Այսպես. հատվածի սկզբում (23–26-րդ տողեր) ասվում է.

– Մենուան ասում է. – երբ խաղողի-այգին tešule
ցուլ և 3 ոչխար թող զոհաբերվի Խալդի աստծուն:

⁵⁸ YKH, № 65, № 66; KYKH, № 82, 83. Առաջինը արձանագիր քարակոթող է (pulusi), ունի 36 տող, իսկ երկրորդը՝ եկեղեցու պատի շարի քարի վրա է և արձանագրությունն ունի 10 տող:

⁵⁹ YKH, № 65, տող 5–9, № 66, տող 2–5:

⁶⁰ YKH, № 65, տող 10–11, № 66, տող 6:

⁶¹ YKH, № 65, տող 12–15:

Ինչպես արդեն ասացինք, Գ. Մելիքիշվիլին չի թարգմանում *tešule* բառը, Բ. Մեշյանինովը, այն համարելով անցողական բայ, *teš* արմատը հարցականով թարգմանում է «ավարտել»(?)⁶², իսկ Բ. Դյակոնովը, բառարմատը համարելով *teš-*ը, որպես անանցողական բայ, նույնպես հարցականով թարգմանում է «հասնել» (միրգը)⁶³: Վերջին երկուսի մոտեցումն էլ, անկասկած, բխում է հատվածի բովանդակությունից, այսինքն՝ Բ. Մեշյանինովը համարում է, որ Խալդի աստծուն զոհեր պետք է մատուցվեն խաղողի այգու հիմնումը «ավարտելուց» հետո, իսկ Բ. Դյակոնովը՝ այգու բերքը «հասունանալուց» հետո: Սակայն գիտենք, որ խաղողի այգին կարող է ունենալ որոշակի այլ վիճակներ ևս, ինչպես՝ ճյուղակալումը կամ տերևակալումը, էտը, բերք տալը, խաղողօրհները, բերքահավաքը և այլն, հետևաբար, միայն տրամաբանությամբ այս կամ այն բառը ընտրելը կարող է նաև սխալ թարգմանության հանգեցնել: Այժմ փորձենք պարզել, թե իրականում ի՞նչ էր նշանակում *tešuli* բառը և պահպանվե՞լ է արդյոք այն հայերենում:

Մեր կարծիքով՝ այն բարդ բառ է, կազմված *teš* և *uli/e/* արմատներից, որոնցից առաջինը, թերևս, նույնանում է հայերենում պահպանված «տաշ» արմատով և բառավերջի *-տ* և *-ն* ածականներով⁶⁴ կազմված «տաշ-տ» և «տաշ-ն-ակ» բառերից, որոնք նշանակում են «խաղողի որթի մատեր» կամ «խաղողի հաստ ճյուղերը, որոնց վրա են լինում կտրելու, էտելու մատերը»⁶⁵: Սեպագիր վկայված *teš>տաշ* (*e>ա* սովորական անցմամբ, որի մասին խոսվեց վերևում) արմատը, փաստորեն, նշանակել է խաղողի ճյուղ, մատ, որն էլ հուշում է, որ մյուս՝ *uli* արմատը պետք է նշանակի «տա, լինի, կալի»⁶⁶, այսինքն՝ *tešuli/e* պետք է նշանակի «ճյուղ-տա», «ճյուղակալի»:

Կարծում ենք, որ նման թարգմանությունը լիովին համապատասխանում և ամբողջացնում է տվյալ հատվածի բովանդակությունը, այն է.

23. (ես) Մինուաս ասում եմ. 24. երբ խաղողի այգին ճյուղակալի,

25. ցուլ և 3 ոչխար Խալդիին 26. (թող) զոհաբերեն:

Հաջորդ՝ 27-րդ տողը՝ *ha-lu-li aš-hu-li-ni*, Գ. Մելիքիշվիլին հարցականով թարգմանում է՝ ծիսակատարություններ (?) թող կատարվեն (?), Բ. Մեշյանի-

⁶² АСУЯ, с. 304.

⁶³ УПД, с. 91. Այս և մնացյալ բոլոր դեպքերում Ն. Հարությունյանը համակարծիք է Բ. Դյակոնովի մոտեցումներին (տե՛ս ԿՄԿԻ, № 82, տող 23–36):

⁶⁴ ՀԼՍՍ, էջ 261:

⁶⁵ ՀԱԲ, հ. IV, էջ 371, է դ. Ա դ ա յ ա ն. Արդի հայերենի բացատրական բառարան, հ. II, Երևան, 1976, էջ 1410–1411:

⁶⁶ Սույն կարծիքը կարծես թե հնարավոր է հիմնավորել բազմաթիվ արձանագրություններում նաև որպես առանձին բառ հանդես եկող *u-l-i/e* (ՄԿԻ, -39, տող 24 և այլուր) > *huy*. «լի-նել» հնարավոր անցմամբ (բառակազմի *u/ու/-ի* անկմամբ, ինչպես սեպ. *uduli* > *huy*, տողի □վայրի խաղող□ կամ հենց հայերենում՝ ուղարկել>ղրկել/բրբ/, ուղղորդ>ղորդ /բրբ/ և այլն), չնայած *uli/e* բառը մասնագետները թարգմանում են «ուրիշ» (տե՛ս ՄԿԻ, с. 411; УПД, с. 92; АСУЯ, 327), անկասկած շփոթելով արձանագրություններում բազմիցս վկայված *u-li-še* □ուրիշ□ (ՄԿԻ, № 30, տող 18 և այլուր) բառի հետ:

նույր հալսի/e-ն համարում է հոգնակի թվով դրված բայ, բայց չի թարգմանում⁶⁷, իսկ Բ. Դյակոնովն էլ այն թարգմանում է «հացկերույթ» (ծիսական)⁶⁸:

Առաջին՝ հալսի բառը, անկասկած, որն է կապ չունի առաջարկված թարգմանությունների հետ, այլ հայերեն «խաղող» բառի սեպագիր վկայված ձևն է՝ լ>ղ սովորական անցմամբ, իսկ սեպագիր ս/ու/-ն արտահայտել է նաև -ո- հնչյունը: «Խաղող» բառը, մեր կարծիքով, բարդ կազմություն ունի և բաղկացած է հալ և սևի արմատներից, որոնցից առաջինը հայերեն խաղ «խաղալ, շարժվել, գնալ, վազել, արշավել»⁶⁹ բառն է, իսկ երկրորդ բաղադրիչը՝ սև «լինել, անել, տալ» բառը, որի մասին վերևում ասվեց: Այսինքն՝ խաղող նախապես նշանակել է խաղ-/աց/ող, շարժվող, գնացող, սողալով աճող⁷⁰, որն անտարակույս խաղողի վազի բնորոշ հատկանիշն է:

Հաջորդ՝ աճիսլուո բառի թարգմանության հարցում ևս մասնագետները տարակարծիք են: Այսպես, եթե Գ. Մելիքիշվիլին և Հ. Կարագոյանն այն համարելով ներգործական սեռի բայ՝ հիմքը համարում են աճիս-ն և համապատասխանաբար թարգմանում «կատարել, ի կատար ածել, հարդարել, սարքել, գործածել, ավարտել»⁷¹ կամ «գոհաբերել, ձոնել»⁷², ապա Ֆ. Քյոնիգը և Բ. Դյակոնովը բայի հիմքը համարում են աճի-ը՝ համապատասխանաբար թարգմանելով «պայթեցնել, հարվածել, նվիրաբերել, հատկացնել»⁷³ և «գոհաբերել», «կատարել ծիսական գործողություններ, սահմանել ծես, գոհ», միաժամանակ համեմատելով այն խուռերեն աճի- նույնիմաստ բայի հետ⁷⁴: Թեև վերոհիշյալ բոլոր մասնագետներն էլ գտնում են, որ աճի/ս/-ն բայական հիմք է, սակայն, ինչպես տեսնում ենք, թարգմանության հարցում տարբեր մոտեցումներ ունեն:

Վերոհիշյալ թարգմանություններից առավել հավանական ենք համարում Բ. Դյակոնովի և Հ. Կարագոյանի առաջարկած «կատարել ծիսական գործողություններ», «ձոնել» թարգմանությունները, որոնք հիմնավորվում են հայերենում պահպանված աշխ-արմատի գոյությամբ: Այն թեև առանձին չի գործածվում, սակայն հանդես է գալիս ածանցված ձևով, ինչպես, օրինակ, ապ-աշխարել, ուր ապ-ը ժխտական է, ար-ը մասնիկ (ինչպես մեծ-ար-ել, աստուած-ար-եալ և այլն) և նշանակում է «աղոթել», «կատարել ծիսական գործողություն, աղոթք», «ողբալ», «լալ»⁷⁵:

⁶⁷ АСУЯ, с. 125.

⁶⁸ УПД, с. 88; КУКН, № 82, տող 27:

⁶⁹ ՀԱԲ, հ. II, էջ 322:

⁷⁰ Նույն տեղում: Գիտական գրականության մեջ կարծիք է հայտնվել հայերենի խաղող բառի հնարավոր խուռական ծագման մասին (տե՛ս Н. А. М к р т ч я н. Субстратные названия растений в армянском языке.– «Древний Восток». Ереван, 1983, с. 27), որը, սակայն, ընդունելի չէ:

⁷¹ УКН, с. 390.

⁷² Հ. Կ ա ր ա գ յ ո ղ յ ա ն. Ուրարտական նորահայտ գաղափարագրեր.– ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, - 2, էջ 64:

⁷³ НСН, р. 175.

⁷⁴ УПД, с. 87, ծան. 89:

⁷⁵ ՀԱԲ, հ. I, էջ 217, 228: Թեև ապ-աշխ-արել բառը Հ. Աճառյանը համարում է իրանական փոխառություն, սակայն աներկբայորեն կարելի է ասել, որ նման մի արմատ գոյություն է ունեցել հ. ե. մայր լեզվում, որից էլ անցել է ինչպես սեպագրական շրջանի հայերենին, այնպես էլ իրանական լեզուներին:

Անշուշտ, «կատարել ծիսական գործողություն» կարող էր նշանակել նաև «օրհնել», «փառաբանել» և այլն, հետևաբար, *h*aluli ašhulini նախադասությունը կարելի է թարգմանել «(երբ) խաղողը օրհնեն, փառաբանեն» կամ «(երբ) խաղողի օհնությունը լինի», կամ էլ ինչպես այսօր ասվում է՝ «խաղողօրհնեքին», «խաղողօրհնեքից հետո»:

Հարցականով թարգմանվող հաջորդ բառը 30-րդ տողի *š*u^he բառն է, որը, ի տարբերություն Գ. Մելիքիշվիլու «շինվածք, կերտվածք, սարք, հարմարանք» թարգմանության, Ֆ. Քյոնիգը, Բ. Մեշյանիևույր, Բ. Դյակոնովը և Ն. Հարությունյանը համարում են ածական ու թարգմանում «արագ, արդյունավետ, հաջող»⁷⁶ կամ «նոր»⁷⁷:

Իրականում ի նշ կարող էր նշանակել *š*u^he բառը: Դատելով նախադասության բովանդակությունից (երբ այգիները *š*u^he)՝ մենք հակված ենք այս բառը նույնացնել հայերենի ճոխ «հարուստ, փարթամ, պերճ, փառավոր»⁷⁸ բառի հետ: Դա մեզ հնարավորություն կտա նախադասությունը թարգմանել՝ «... երբ այգիները փարթամանան, ճոխանան»: Եվ քանի որ լեզվական տեսակետից էլ հնարավոր է *š*u-ú-*h*i-e > ճոխ գուգահեռը⁷⁹, ուստի նման թարգմանությունը կարելի է միանգամայն ընդունելի համարել: Տեղին է նշել, որ սեպագիր տեքստերում *š*u^he բառով կազմված մեկ տասնյակից ավելի նախադասություններ⁸⁰ քննությամբ ևս հիմնավորվում է մեր կողմից առաջարկվող գուգահեռի ճշտությունը: Այսպիսով, այս տողը կարող ենք թարգմանել.

30. ... երբ այգիները ճոխանան (փարթամանան, շքեղանան):

Հաջորդ՝ 31-րդ տողի առաջին՝ *a*h^uli/e բառը չի թարգմանվել, իսկ հաջորդ՝ *q*armehi բառը հարցականով թարգմանել է «տոն»:

Այս բառի թարգմանության և նույնիսկ ընթերցման⁸¹ հարցում մասնագետների մոտ տարակարծություններ կան: Այսպես, եթե Բ. Դյակոնովը *a*h-արմատը թարգմանում է «հավաքել»⁸², իսկ Ն. Հարությունյանը սկզբնապես ամբողջ բառը համարելով ապառնի ժամանակի, եզակի թվի երրորդ դեմքով դրված բայ, հարցականով թարգմանում էր «ծաղկել?», «պտղակալել?», «հասնել?»⁸³, ապա հետագայում լիովին ընդունում է Բ. Դյակոնովի տեսակետը⁸⁴:

⁷⁶ АСУЯ, с. 283–284.

⁷⁷ HChI, II, p. 202; УПД, с. 53; Н. В. Арутюнян. Земледелие и скотоводство Урарту (այսուհետև՝ ЗСУ). Ереван, 1964, с. 120, ծան. 104, ուր հեղինակն այս բառը համարում է GIBIL «նոր» գաղափարագրի բառային արտահայտությունը:

⁷⁸ ՀԱԲ, հ. III, էջ 210:

⁷⁹ Մեկագրում համապատասխան նշաններ չկան □ճ□ և «ո/օ» տառերը գրելու համար, ուստի դրանք պետք է արտահայտվեին § /շ/ և u /ու/ նշաններով, իսկ բառավերջի կիսաձայն i/e-ն, հավանաբար, չի էլ հնչել:

⁸⁰ УКН, -25, տող 4, 9; - 27, տող 27, 28, 29, 86, 87; - 124, տող 5; - 281, տող 13; - 448, տող 7.

⁸¹ Ֆ. Քյոնիգը *a*-*h*u-*li*-e բառի առաջին *a*/վա/ նշանի փոխարեն հարցականով ընթերցում է *aš* (տե՛ս HChI, 41 (tafel 35), V-31), որը, սակայն, արձանագրության պահպանված ֆոտոնկարներով հնարավոր չէ հիմնավորել (տե՛ս C. F. Lehmann-Haupt. Corpus Inscriptionum CHaldicarum (այսուհետև՝ CICH), Berlin und Leipzig, 1928 taf. XIX.

⁸² УПД, с. 87.

⁸³ ЗСУ, с. 106, ծան. 18.

⁸⁴ УКН, № 82, տող 31.

Անկասկած, նման թարգմանությունները բառի իմաստը տեքստին ինչ-որ կերպ հարմարեցնելու միտում ունեն, սակայն զարմանալիորեն հաշվի առնված չէ, որ մեկ այլ արձանագրության մեջ 'ahuli/ni/ բառը վկայված է NA4 «քար» որոշիչով⁸⁵ (դետերմինատիվ), որը, ինչպես հայտնի է, օգտագործվում է միմիայն քարի և քարից կերտված կոթողները (արձանագրություն և այլն) բնորոշելու համար⁸⁶: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև 'ahuli բառը uli - վերջավորությամբ մյուս բառերի նման համարելով բարդ բառ 'ah և uli արմատներով՝ հնարավոր ենք համարում առաջին՝ 'ah արմատը նույնացնել հայերենի վախ («գահավեժ տեղ», «դարավանդ», «ժայռ»)՝⁸⁷ բառի հետ: Քանի որ 'ah արմատի առաջին սեպախումբը՝ ապաթարցով «ա»-ն, ընթերցվում է և՛ «վա» (օր. D'A⁸⁸ և D'Ja⁸⁹, D'Arubani⁹⁰ և D'Jarubani⁹¹), և՛ «յա» (օր. I 'Aza⁹² և հայերեն Յազատ Մասիւ⁹³), հետևաբար, լեզվական տեսակետից 'ah > վախ անցումը միանգամայն ընդունելի կարելի է համարել և բառը թարգմանել «դարավանդներում-եղած», «դարավանդներում-տնկված»⁹⁴: Իսկ իմաստային առումով նախորդ տողի հետ կթարգմանվի ... «դարավանդներում տնկված այգիները երբ ճոխանան փարթամանան, մեծանան»:

31-րդ տողի վերջին՝ հարցականով թարգմանված բառը qarmehi-ն է, որը տեքստում վկայված է ևս 2 անգամ՝ 34 և 35-րդ տողերում: Այս բառի թարգմանության հարցում ևս մասնագետները տարակարծիք են⁹⁵:

Մեր կարծիքով՝ այն բարդ բառ է և կազմված է qar ni meh (վերջին i-ն չի հնչել) արմատներից: Առաջին՝ qar արմատը հնարավոր ենք համարում նույնացնել h.-ե. *k^[h]r-/*k^[h](e)r - «գլխավոր», «գլուխ»⁹⁶ արմատի, իսկ երկրորդ meh (i)-ն h.-ե. *meH արմատի հետ, որը նշանակում է «ժամանակ», «ժամանակ

⁸⁵ Н. В. Арутюнян. Новые урартские надписи (այսուհետև՝ НУН). Ереван, 1966, с. 77, տեքստ V, տող 5, УКН, № 451, տող 5.

⁸⁶ Տե՛ս УКН, с. 381.

⁸⁷ Մտ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Երևան, 1944, էջ 288:

⁸⁸ УКН, № 463, տող 1.

⁸⁹ УКН, № 27, տող 6. D'A և D'Ja աստվածանունների նույնացումը՝ ըստ Ն. Հարությունյանի (НУН, с. 84):

⁹⁰ УКН, № 27, տող 21.

⁹¹ УКН, № 25, տող 5, 10.

⁹² УКН, № 127, IV, տող 73.

⁹³ 'Aza > Յազատ/տ/ նույնացումը ըստ Հ. Կարազյոզյանի (տե՛ս ՀԼՍՍ, էջ 260):

⁹⁴ uli «տալ, լինել, կալել» բայը հաստատվածի բովանդակությունից ելնելով, հավանաբար, կարող է ունենալ նաև «եղած, աճող, տնկված, առկա» և այլ իմաստներ:

⁹⁵ Գ. Մելիքիշվիլին և Բ. Դյակոնովը qarmehi բառը թարգմանում են «տոնակատարություն/?» (УКН, с. 404, УПД, с. 90), Ֆ. Քյոնիգը՝ «գոհաբերության հատուկ ձև» (HChI, էջ 72, ծան. 11, էջ 198), Բ. Մեջանիմովը՝ «փառք, փառաբանում» (АСУЯ, с. 182), իսկ Հ. Կարազյոզյանը, այդ բառը նախ համեմատելով հեռորդիֆիկ խեթերենի և լուվիերենի harmahi բառի հետ, հարցականով թարգմանում է «գլուխ/?» (Հ. Կ ա ր ա գ յ ո գ յ ա ն. Ուրարտական նորահայտ գաղափարագրեր. - ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, № 2, էջ 64-65), այնուհետև այն հարցականով թարգմանում է «սպիր/?» (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Երևան 1981, էջ 50-51):

⁹⁶ ИЯИИ, с. 113 և այլուր: Այս արմատը նույն իմաստով հայերենում պահպանվել է կար-ապետ «առաջնորդ», «առաջնորդող» բարդ բառում, որն այժմ օգտագործվում է որպես հատուկ անուն՝ Կարապետ, Կարո, Կարպիս, Կրպե, Կրպո ձևերով (տե՛ս ՀԱԲ, հ. II, էջ 545):

հաշվող», «ժամանակ չափող», «լուսին» (վերջինս նույնպես ընկալվել է որպես ժամանակի միավոր՝ ամիս)⁹⁷: Այս *meH արմատը *meH-s և *meH-n բարբառային տարբերակներով պահպանվել է հ.-ե. գրեթե բոլոր լեզուներում, նաև հայերենում «ամիս» և «լուսին» իմաստներով (օր. իւթթ. meḥ-ur «ամիս», հին. հնդկ. māḥ, masa «լուսին», «ամիս», լատին. mēnsis, ֆրանս. mois, իտալ. mese, իսպան. mes «ամիս», պարսկ. māh «լուսին», հուն. μῆν «լուսին», «ամիս», հայ. ա-միս, ռուս. мес-яч «ամիս» և այլն)⁹⁸: Հայերենում պահպանվել է նաև հ.-ե. նախալեզվի *meH «ժամ, ժամանակ» արմատը ածանցված՝ մեհ-եան («բազին», «հեթանոսական տաճար», «կրատուն») ⁹⁹ և մեհ-եկան (հայկական տոմարի յոթերորդ ամիսը) բառերում¹⁰⁰: Հ.-ե. *meH > «ժամ» արմատի հայերենում ունեցած նաև «մեհեան», «տաճար» իմաստը, անշուշտ, ի սկզբանե պայմանավորված է եղել տաճարներին և հոգևոր դասին վերապահված տոմարագիտական հաշվարկների (ժամ, օր, ամիս, տարի, դար) համակարգի ստեղծման, պահպանման ու օգտագործման գործառնությունների իրականացմամբ: Հենց այս հանգամանքն էլ, որ հ.-ե. գրեթե բոլոր լեզուներում հոգևոր կառույցները այսօր էլ կոչվում են «ժամ», «ժամատուն» (օր. ֆր. temps «ժամ, ժամանակ» և temple «տաճար», անգլ. time «ժամանակ» և temple «տաճար», ռուս. час «ժամ» և часовня «մատուռ», հայ. ժամ, ժամատուն, ժամասացություն, ժամկոչ և այլն)¹⁰¹, որը, անշուշտ, ընդհանուր հ.-ե. լեզվամտածողության արդյունք է: Քրիստոնեության մուտք գործելուց հետո վերացվեցին ոչ միայն հեթանոսական տաճարները, այլև հրաժարվեցին նախկին անվանումներով կոչել նորօրյա պաշտամունքային կառույցները, և հ.-ե. *meH «մեհ-եան» բառը փոխարինվեց իրանական փոխառություն համարվող «ժամ», «ժամատուն» բառերով:

Այսպիսով, հ.-ե. *meH > սեպ. meḥ (i) արմատի «մեհ-եան» թարգմանությունը կարելի է ընդունելի համարել, և qarmehi բառը թարգմանել «գլխավոր-մեհեան», «գլխավոր-տաճար.. իսկ մեր կողմից քննարկվող հատվածն էլ կունենա հետևյալ տեսքը.

23. (Ես) Մենուաս ասում-եմ.
24. Երբ խաղողի-այգին ճյուղակալի,
25. (մեկ) ցուլ (և) 3 ոչխար Խաղի աստծուն
26. (թող) զոհաբերեն,
27. խաղողօրհներին (ևս)
28. և՛ Խաղեան դարպասներում
29. և՛ արձանագրության-առջև, (իսկ)
30. երբ այգիները ճոխանան (հասնեն, փարթամանան, շքեղանան)

⁹⁷ ИЯИИ, с. 684; ՀԱԲ, հ. I, էջ 157–158:

⁹⁸ Նույն տեղում:

⁹⁹ ՀԱԲ, հ. III, էջ 296:

¹⁰⁰ Նույն տեղում: Ա. Մեյեն այդ բառերը թեև համարում է իրանական ծագման, սակայն նաև տարակուսանք է հայտնում, որ ոչ Ավեստայում, ոչ էլ ավեստայական գրականության մեջ դրանք չեն հանդիպում (տե՛ս Ա. Մեյեն. Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 119):

¹⁰¹ Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գ. Ջահուկյանի հայտնած այն կարծիքը, ըստ որի՝ D Halidi > Հաղ-դի դիցանունը սկզբնապես նշանակել է Ծամանակի աստված (տե՛ս նաև Ժ. 19):

31. դարավանդներում, գլխավոր-մեհեանում (տաճարում)
32. Խալդի աստծուն թող-փառաբանեն (օրհներն)
33. (նան) Խալդեան դարպասներում,
34. Վարուբանի-աստվածուհուն՝ գլխավոր-մեհեանում (տաճարում)
35. (իսկ) Խալդի աստծուն գլխավոր-մեհեանում
36. (և) արձանագրության-առջև:

Ինչպես տեսնում ենք, արձանագրության այս հատվածը, այժմ լիովին հասկանալի է դառնում: Այն բավականին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Վանի թագավորության պատմությանն առնչվող մի շարք հարցերի պարզաբանման համար: Առաջինը, թերևս, խաղողը օրհնելու ծիսակարգի մասին վկայությունն է: Այսօր էլ մեծ շուքով տոնվող այդ տոնակատարության առաջին գրավոր վկայությունը, փաստորեն, 2825 տարվա վաղեմություն ունի: Եթե դրան էլ գումարենք Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ վայրերից գտնված հնագիտական բազմաբնույթ գտածոները (գինու կարասներ, սափորներ և այլն), ինչպես նաև Արենիի քարանձավում պեղված 6000-ամյա խաղողի հնձանը, ապա պարզ կդառնա, որ Մենուա արքայի (մ. թ. ա. 810–782 թթ.) արձանագրության մեջ հիշատակված օրվանից չէ, որ սկիզբ է դրվել խաղողի օրհնության ծիսական տոնակատարությունը, այլ այն հազարամյակների խորքից եկած և արդեն կատարյալ բյուրեղացած վիճակում (ինչը հրաշալի ներկայացված է արձանագրության մեջ) հասել է Մենուայի թագավորության շրջանը, այնուհետև հասել մեզ¹⁰²:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Մենուան իր կառուցած քաղաքը կոչում է Խալդի աստծո անունով, իսկ քաղաքի համար նախատեսված նորատունկ այգիները իր՝ Մենուայի անունով: Ի՞նչ կարող էր սա նշանակել: Արդյոք այդ հանգամանքը չի՞ ստիպում մեզ մտածել, որ խոսքը ոչ թե զուտ տնտեսական նշանակություն ունեցող այգիների մասին է, այլ ինչ-որ առանձնահատուկ, «արքայական մի պարտեզի» որը, հավանաբար, նախատեսված էր արքայի և արքայական ընտանիքի հանգստի ու վայելքների համար: Թե ինչպիսի տեսք է ունեցել այդ այգին, դժվար է ասել, սակայն դատելով արձանագրության 30–31-րդ տողերից՝ «երբ այգիները ճոխանան (ջրեղանան, փարթամանան, հասնեն) դարավանդներում...», կարելի է ենթադրել, որ այն դարավանդաձև կառուցվածք է ունեցել: Դարավանդաձև նման մի այգի էլ Մենուան կառուցել է իր աղջկա՝ Թարիրիայի համար՝ այն անվանելով «Թարիրիայան» այգի (SAL Taririahinili)¹⁰³: Արհեստական դարավանդներով կառուցված այդ այգին գտնվել է Վանա լճի հարավարևելյան մասում՝ Կատեպանց գյուղի մոտ՝ Մենուայի նշանավոր ջրանցքից ոչ հեռու: Պահպանվել են խոշոր, կոպտատաշ քարերով շարված, մինչև 10 մ բարձրությամբ առաջին հարթակի մոտ 0,1 հա մակերեսով մի հատված (նախապես այն, հավանաբար, ունեցել է մոտ 1 հա

¹⁰² Նման անհերքելի փաստերի առկայության դեպքում տարօրինակ է, որ մեր փոխարեն հարևան Վրաստանն է իրեն հռչակում գինու հայրենիք:

¹⁰³ YKH, № 111; 3C.Y, c. 103.

մակերես) և երկրորդ հարթակի շարվածքի որոշ հատվածներ՝ բարձր, բլրաձև հողաթմբի տակ թաղված, որտեղից էլ գտնվել է արձանագրությունը¹⁰⁴:

Սյապիսով, սեպագիր արձանագրությունների և դրանց որոշակի հատվածների վերլուծության հիման վրա կարող ենք ասել հետևյալը.

ա) քննարկված տեքստերի անհասկանալի բառերն ու բառարմատները մեկնվում են հայերենով և դրանց զգալի մասը ունեն նաև հուսայի հնդեվրոպական գուգահեռներ:

բ) Սյր բառերի (և արմատների) սեպագրում վկայված լինելու հանգամանքը, որպես ընդհանուր հ.-ե. բառամթերք, կարող է նաև որոշակի պարզեցում մտցնել հայերենում առկա համապատասխան ձևերի ծագումնաբանության հարցում:

գ) Առանձին տողերի կամ բառերի անհասկանալի մնալու պատճառներից մեկն էլ սեպագիր հնչյունների ոչ ճիշտ բառաբաժանումն է: Ընդունված ստանդարտներից հրաժարվելուն ուղղված հետազոտ աշխատանքները կարող են էական բացահայտումների հանգեցնել:

դ) Սեպագիր տեքստերում առկա շատ բառեր և քերականական ձևեր առանց էական փոփոխությունների պահպանվել են հայերենի բարբառներում և դրանց վերհանումն ու համադրումը կարևոր կարող է լինել արձանագրությունների լեզվի հետազոտ ուսումնասիրման համար:

О ПЕРЕВОДЕ НЕКОТОРЫХ КЛИНОПИСНЫХ НАДПИСЕЙ

ВАГАН ГАЙСЕРЯН

Резюме

Значительная часть клинописных надписей Ванского царства или их определенных частей до сих пор не имеет связанного перевода и остается непонятной. Основная часть слов этих надписей имеет убедительные индоевропейские параллели. Эти слова:

1. Клинописное ma-ri<и.е. *mar//*mor «море, озеро» – арм. mawr «болото».
 2. Клинописное al-zi-ni (звучанием alzen) = арм. ардзан – памятник, «каменная глыба, монумент с наскальными надписями».
 3. Клинописное a-ъ-di (aц-di) – арм. «великий–отец–бог, великий бог, великий»;
- а) aц< и.е. *aцo> арм. haw «великий отец»
 б) di<*dhēs, *dhəs «идол, свет», арм. di-kh, di-ts «бог».

¹⁰⁴ Հայտնի է, որ պատմահայր Նորենացին Վանի թագավորների և հատկապես Մենուա արքայի հսկայածավալ շինարարական բոլոր ձեռնարկումները վերագրել է Ատրեստանի առասպելական թագուհի Շամիրամին և, մեր կարծիքով, դարավանդաձև կառուցված ու, անկասկած, հանգստի և վայելքների համար նախատեսված «շքեղ, ճոխ» այս այգիներն են հիմք հանդիսացել աշխարհի յոթ հրաշալիքներից մեկի՝ Շամիրամի կախովի այգիների առասպելի համար:

4. Клинописное *me-i=mm-i(mi)* < и.е. **mē* > арм. ми «нет, не».
5. Клинописное *ar-ḫi* = арм. алх (³ÖĒ) «род, племя».
6. Клинописное *ʔ-ru-li-a-ni* (*uruli+iani*) – «замучить, убить, умертвить»;
 а) *uru* (*li* – указатель мн. числа) = арм. уру «душа»,
 б) *ian/i/* = арм. han (*han-el*) «снимать, захватить».
7. Клинописное *pa-ga* < и.е. **pēg* «мужчина»/ *a* – указатель и.е. мн. ч./ «мужчина, человек, род, племя» > арм. а-нер (тесть).
8. Клинописное *ʔ-lu-ʔ-li-e* < и.е. **ol* > арм. *vogh* (áÖ), повтором *voghogh* (áÖáÖ) «скорбь, плачь, вопль».
9. Клинописное *a-ʔ-e-i* < и.е. **rau* > арм. hav «начало, край, конец, до конца, вечно».
10. Клинописное *te-šʔ-li-e* (*teš+uli*) – «ответвляться, давать ветки»;
 а) *teš* = арм. таш-т, таш-н «побег виноградной лозы, толстая ветка винограда»;
 б) *uli* (*u-li*) = арм. ли-нел (ĒÇ-ŶĒ) – «быть, делать».
11. Клинописное *ḫa-lu-li* (*ḫal+uli*) – «виноград»;
 а) *ḫal* = на армянском *haḡh* (Ē³Ö) «двигаться, идти, совершить поход»;
 б) *uli* = «быть, делать»
 хахох (Ē³Ö áÖ)/виноград – расти, ползти, идущий вперед.
12. Клинописное *aš-ḫu-li-/ni/* (*ašh+uli*) – «благословлять, дать благословение»;
 а) *ašḫ* = арм. ашх (³βĒ) (ср. ап-ашх-арел), «молиться, оплакивать, рыдать»
 б) *uli* = «быть, делать».
13. Клинописное *š-u-ú-ḫi-e* = арм. *tchokh* (xáĒ) «роскошный».
14. Клинописное *ʔ-a-hu-li-e* (*ʔah+uli*), «будучи на террасе, растущий на возвышенности»;
 а) *ʔah* = на армянском *vaḡ* «терраса, крутое возвышение, скала»,
 б) *uli* = «быть, делать».
15. Клинописное *qar-me-ḫ/i/* (*qar+meḫ*) – «главный храм, языческий храм»;
 а) *qar* < и.е. **k^[h]r / k^[h](e)r* «глава, главный»,
 б) *meḫ* < и.е. **meH* «месяц, час, время», арм. *meḡ-eap*, «языческий храм, жертвенник».

ON THE TRANSLATION OF SOME CUNEIFORM INSCRIPTIONS

VAHAN GAYSERYAN

Summary

The most part of cuneiform inscriptions of the Van kingdom or their certain parts have been remained incomprehensible till the present day: they have bad translation, that are formed without the hieroglyphs and are out of the standart construction.

These words are the following:

1. Cuneiform ma-ri < IE *mar/*mor “sea, lake” - in Armenian mawr “swamp”.
2. Cuneiform al-zi-ni (pronounced as alzen) = in Armenian ardzan - monument “boulder, monument with rock inscriptions”.
3. Cuneiform a-ú-di (aú-di) - in Armenian “great-father- God, great God, great”,
 - a) aú < IE *aúo> in Armenian haw “great father”,
 - b) di < *dhes, *dhəs “idol, light”, in Armenian di-kh, di-ts “God”.
4. Cuneiform me-i=mì-i(mi) < IE *mē> in Armenian mi “no, not, not to be”.
5. Cuneiform ar-ḫi= in Armenian aghkh (³ÖĒ) “generation, tribe”.
6. Cuneiform ú-ru-li-a ni (uruli+iani) – “torture, kill, murder”,
 - a) uru (li - index of plural form) = in Armenian uru “soul”,
 - b) □an/i/ = in Armenian han (han-el) “remove, seize”.
7. Cuneiform na-ra < IE *nēr “man”/ a- index of IE plural form/ “man, human, generation, tribe” > in Armenian a-ner (father-in-law).
8. Cuneiform ú-lu-ú-li-e < IE *ol> in Armenian vogh (áÖ), in repetition voghogh (áÖáÖ) “sorrow, cry, scream”.
9. Cuneiform a-ú-e-i < IE *pau> in Armenian hav “beginning, border, end, up to the end, forever”.
 10. Cuneiform te-šú-li-e (teš+uli) – “branch off”,
 - a) teš = in Armenian tash-t, tash -n “primocane, thick branch of vine”.
 - b) uli (u-li) = in Armenian li-nel – “to be, to do”.
 11. Cuneiform ḫa-lu-li (ḫal+uli) – “grape”.
 - a) ḫal = in Armenian xagh (Ē³Ö) - “to move, to go, to go on a trip”,
 - b) uli = “to be, to do”.
12. Cuneiform aš-ḫu-li-ni/ (ašh+uli) – “bless, give benediction”;
 - a) ašḫ = in Armenian ashkh (compare ap-ashkh-arel), “pray, mourn, weep”,
 - b) uli = “to be, to do”.
13. Cuneiform šu-u-ḫi-e = in Armenian tchokh (×áĒ) “luxurious”.
14. Cuneiform ’a-hu-li-e (’ah+uli), “being on a terrace (upland), growing on a hill”;
 - a) ’ah = in Armenian vakh “terrace, steep eminence, rock”,
 - b) uli= “to be, to do”.
15. Cuneiform qar-me-ḫ/i/ (qar+meh) – “mother church, heathen temple”.
 - a) qar < IE *k^[h]r / k^[h](e)r “head, main”,
 - b) meh < IE *meH “month, hour, time”, in Armenian meh-ean, “heathen temple, altar, church”.